

ՀԱՆ ԴԷՍ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ԱՆԳՂԻԱԿԱՆ ԲԵՒԵՌԱԶՈՒ ՆԱԽԱՐԿՈՒԹԻՒՆ՝

Անցեալ տարի Պունդորա նաւուն Եւրոպա բերած նամակները կը պատմէին թէ անգղիական բեռնաշու նաւերն էլէրդ և Տիզգըվրի, որոնք նոյն տարւոյն մայիսի վերջերը ճամբայ ելեր էին Բորդսմըթէն², Խէյպէս հասեր էին մինչև Բորդ-Ֆուլք (Port-Foulque), Եօռք սարին հիւսիսակողմը, Պաֆինի ծովուն մէջ։ Այս կէտէն սկսեալ շարունակենք համառօտ պատմութիւնն արկածից և զիւտից այն երկու նաւերուն։

Նաւարկութիւնը ծանր դժուարութիւններ ունեցաւ երբ Սմիթի նեղուցէն անցնելով մտաւ Բէննըտի ջրանցքին մէջ։ Ֆրէյզըր (Fraser) սարին խորոցը վրայ պաշարուեցան այն նաւերը սառուցի կղանքով (banquise), որոնց մէջ շատ դժուարութեամբ խալրեցան։ Ամիս մը անտանելի նաւարկութեամբ, 25 օգոստոսի հասան Բոլարիսի ծովախորշին (baie) գիմաց, Լէտի-Ֆրանկլին ըստած նեղուցին հիւսիսային ծովափանցը վրայ, 81° 40' հիւսիսային լայնութեան տակ։ Նէյրա նաւապետն հրամայեց Տիզգըվրի նաւուն որ այն նաւահանգստին մէջ ձմերէ, և թողուց այն նաւուն մէջ Ռաւսըն (Rawson) ա-

նունով էլէրդի սպայն, որ երբ սառուցները պողին ու միանան՝ բախիրով գայ գտնէ զինքը։ Իսկ Նէյրա շարունակեց իր ճամբան էլլըրդ նաւով դէպ 'ի հիւսիս, որ կողմերն Հոլ նաւապետը չէր կրցած քննել։ Հաղիւ սեպտեմբերի վերջերն էլլըրդ հասաւ 82° 27' հիւսիսային լայնութեան տակ, եօթանասուն մըն դէպ 'ի հիւսիս այն կէտէն ուր Տիզգըվրի սկսեւ եր պատրաստուիլ ձմեռն անցընելու։

Հետզհետէ այս բեռնախնդիր նաւարկութեան դժուարութիւնները բազմապատկուեցան։

Եննդենէ քանի մը օր առաջ նախայիշատակեալ Ռաւսըն սպայն ճամբայ ելաւ Տիզգըվրի նաւէն, հետն առած եօթն հօգի դէպ 'ի էլլըրդ նաւն երթալու, տա որ հասաւ բազմապատիկ վրտանգներէ անցնելով, յիտ կռուելու մեծաւ աշխատութեամբ ընդդէմ անուր դժուարութեանց։ Նոյնպէս էլլըրդ նաւէն ուրիշ սպայ մըն ալ հաղիւ մարտի մէջ կրցեր է գալ առ Տիզգըվրի նաւն։ Առաջին փորձ մը 'ի դերև ելեր էր՝ Բէդէրսէն անունով առաջնորդին հիւանդութեանը պատճառաւ, որով հարկադրուեցան այն ճանապարհորդք ետ դառնալ էլլըրդի ձմերոցը, ուր Բէդէրսէն մեռաւ ցրտահարութենէ։

Գրեթէ հինգ ամիս Տիզգըվրի նաւն

1 Բազմադէպ 1876, էջ 33։

2 Ա. Գ. էջ 39։

ամենեւին լուր մը չընդունեցաւ էլլորդ նաւէն, որ դէպ 'ի հիւսիս յառաջեր էր, և Ստէֆէնսըն հրամանատարն ու իր սպայները մեծ անձկութեան և հոգոյ մէջ էին իրենց ընկերակցացը վրայ:

Չմեռն հաւասարապէս շատ խիստ եղաւ այն երկու նաւուց համար ալ. բայց աւելի լաւ պատսպարուած ըլլալով քամիներուն դէմ քան թէ Տիպքը վրի ղէպ 'ի հիւսիս գտնուող նաւն էլլորդ՝ շատ զգալի կերպով տարբեր ստորին բարեխառնութիւն մը չունեցաւ, թէ և աւելի մերձաւոր ըլլար բեռոն:

Չերմաշափն իլաւ գրողէն վար ցածագոյն 60 հարիւրամասն աստիճան. տասնուհինգ օր անընդհատ 33 հարիւրամասն աստիճան գրողէն վար մնաց Չերմաշափն: Մինչև հիմա բեռնաշուռիչ նաւարկութիւն մը այսպիսի զարհուրելի ցրտութեան մը պատահած չէր. ամենեւին վաւերական օրինակ մը չկայ որ երբէք Չերմաշափն այսչափ վար իջած ըլլայ: Ուրեմն ասով ստոյգ չելեր քանի մը աշխարհագրաց մինչև հիմա ունեցած կարծիքն թէ մագնիսական իւրաքանչիւր բեռոն մօտ ցրտութեան ալ բեռն ըլլայ, մէկն հակարկաւ, յին արշիպեղազօսին մէջ, միւսը Սիպերիոյ մէջ:

Փոխանակ ազատ ըլլալու սառույցներէ՝ բեռնային ծոփն ծածկուած էր թանձր կարգ մը սառուցի շառաշիղներով (glazions), որոնք անլուր հաստութիւն ունէին: Այս եզակի իրողութիւնը բացատրելու համար՝ Նէյրս նաւապետն այն ովկիանոսն անուանեց յոյժ մշտնջենաւոր սառուցից (Mer Paléocrystique):

Այս սառույցները դէպ 'ի հարաւ շարժելու ժամանակ ցրտէն կը մածնուն, մէկմէկու հետ կը պնդանան, և արեւուն ջերմութիւնն ոչ երբէք բաւական կ'ըլլայ լուծելու զանոնք ըստ բոլորին, և ամեն տարի նոր նոր սառույցներ ձևանալով կու գան առաջիններուն վրայ կ'աւելնան ու լեռ կը կազմեն: Ամենեւին

նոյն երկոյթը կը կատարուի, ինչ որ կը տեսնուի մշտնջենաւոր սառնարանաց վրայ:

Այս լեռնացեալ սառույցները հետզհետէ վիթխարի հաստութիւն մը կ'աւնուն, և ծովածուփ սառնակոյտներն կու գան ասոնց ոտքը կը խորտակին: Այսպիսի սառնալերան մը նաւահանգիստն ապաւիններ էր էլլորդ նաւն, և այն տեղ խարխալ ձգեր էր: Նէյրս նաւապետն ուզելով յաւերժացունել այս եզակի պարագային յիշատակը, անուանեց այն հանգրուանը Ֆլե-Գէրկ (Flø-Berg), այսինքն Տոլմաճուփ լեռան:

Արդէն Քոչարիսի նաւորդները ծանր երկբայութեան տակ ձգեր էին տօգդոր ֆանի կարծեցեալ գիւտը, թէ ազատ ծով մ'ըլլայ բեռոն տակ: Հիմա այն երկբայութիւնն ստուգութեան փոխուեցաւ. յետ որոյ Նէյրս նաւապետն ու իր ընկերակիցները նորանոր տեղեկութիւններ բերին այն հեռաւոր կողմերէն. և գտեր են անթափանցելի ովկիանոս մը, որ ծածկուած է սառնեղէն վերարկուաւ մը հարիւրաւոր ոտք թանձրութեամբ:

Երբ գարունն եկաւ էլլորդի երկրորդ հրամանատարն Մարքան (Markhane) անունով՝ հետն առաւ երկու սպայ, տասնուհինգ նաւաստի, երկու բալիսիր և երկու նաւակ, վաթսուն օրուան համար ալ ուտելու պաշար, ու ճամբայ ելաւ այն սառնակոյտներուն վրայ:

Քսան օր աշխատելէն ետև, էլլորդի նաւաստիներն դեռ ևս 83° 20' 27" հիւսիսային լայնութեան տակ էին, միայն վաթսունուհինգ մղոն յառաջեր էին, և դեռ ևս կը մնար չորս հարիւր մղոն մինչև բեռն հասնելու:

Սառույցն այնպէս անհարթ էր՝ որ հարկադրուած էին այն ճանապարհորդներն քարուղագով ճամբայ բանալ և բոլորն ալ բալիսիր մը միայն քարշել տանիլ, որով կը բռնադատուէին շատ անգամ նոյն ճամբան ընել: Ամենեւին նշան մը չտեսան ցամաքի մերձաւորութեան, սակայն սառուցէն վար ծովը չափելով ոչ այնչափ խոր կը գտնէին:

և երբեմն ինչուան քսան մէգը խորու-
թեան կը հասնէին:

Անբերկիւղ խուզարկուները, որոնք
ահաւոր դժուարութեանց դէմ պատե-
րազմելով այնպիսի կէտ մը հասան, որ
մերձագոյնն էր բնեօին, և ուր ոչ եր-
բէք մարդ ու գուցէ շնչաւոր արարած
հասած չէր: Վասն զի նոյն իսկ էպրիմա-
ցւոց հետքն 82 աստիճան հիւսիսային
լայնութենէն անդին չանցնիր:

Սառուցից այն վերարկուն այնպէս
դժուարազնալի էր՝ որ հաղիւ թէ օրը
մըն մը ճամբայ կ'ընէին. և թերևս
հասնէին անկելու անգղիական գրօշա-
կը երկրիս շրջաբերութեան առանցից
ծայրը, թէ որ սոսկալի փոթորիկ մը
չըռնադատէր զիրենք ետ դառնալու:
Ուստի սառուցից բլրան մը վրայ կանգ-
նեցին անգղիական դրօշակը և յետ ող-
ջունելու կեցցէ (hurrahs) աղաղակելով,
դարձան դէպ 'ի երկիր Կրանդայ ը-
սուած կողմն, ուր հասան յետին աս-
տիճանի խոնջ ու պարտասեալ:

Մինչդեռ այս քննութիւնները կը
կատարուէին դէպ 'ի հիւսիս, ուրիշ
գունդ մ'ալ ճամբայ ելաւ էլըրդէն և
պատեց մշտնջենաշոր սառուցից ծո-
վոնն բոլորտիքը դէպ 'ի արևմուտք,
այսինքն երկրին Կրանդայ հիւսիսային
ափանցը վրայ: Այս գունդը կտրեց
220 մըն երկայնութիւն, պատեց հը-
լուանդան մը, զոր անուանեց Կոլոնն-
պիա՝ 83 աստիճան հիւսիսային լայնու-
թեան տակ, և կը կարծուի թէ այս
հրուանդանը հիւսիսաքոյն ծայրն ըլ-
լայ ամեն ցամաքաց արջային արշիպե-
ղագոսին, և հետևաբար ամերիկեան
ցամաքին կից մասանցը:

Տիպգրվլորի ալ գունդ մը հանեց
Կրէնլանտի հիւսիսային ափուները քըն-
նելու, որ կը ձգուի 'դէպ 'ի արևելք
Ռօպսըն (Robeson) ըսուած նեղուցին:
Այս ծովափուները լեռնային ըլլալով և
խոր ու բազմաթիւ ծոցեր ունենալով,
ստոյգ որոշողութիւններ կատարելը շատ
դժուարին եղեր է: Սակայն ճանապարհ-
հորդաց այս խումբը կարծեք է տեսնել
ցամաք մը դէպ 'ի հիւսիս ու դէպ 'ի

արևմուտք, հիւսիսային լայնութեան 83
աստիճանին տակ: Գուցէ Կրէնլանտն
այն կողմանէ ձգուի մինչև բնեօ. եթէ
այն քաջաց խմբակը խաղալիկ եղած
չըլլայ տեսաբանական խաբէութեան
մը, որով երբեմն արիասիրտ ու տա-
րաբարդը Հոլ հրամանատարն Բոյարիս
նաւուն՝ կարծեք էր տեսնել իւնիոն
(Union) ըսուած հրուանդանին դէպ 'ի
հիւսիս՝ Նախագահին երկիրը, իր սա-
րերովն ու ժայռերովն, որոնք մշտնջե-
նաւոր սառուց են եղեր: Բայց աշխարհ-
հագրական այսպիսի գաղտնեաց լու-
ծումը պիտի տան ապագայ բնեռաշու-
քննիչներ:

Այս խումբը ցրտոյն խստութենէն և
անտեսելի աշխատանքէն սպառած,
անշուշտ պիտի չկրնար որջ ետ դառ-
նալ՝ ուսելիքը պակսելով, թէ որ ետև-
նէն պաշար չհասցունէին այլք, որոնք
իրենց արշաւանաց կեդրոնատեղի Բո-
յարիսի ծովածոցը զրին: Հոլ նաւապե-
տին ընկերակիցները փայտեայ զիտա-
րան մը կանգնեցին էին այն տեղ, որուն
մէջ հաստատեցին բնակութիւննին այն
պաշարաբերները:

Տիպգրվլորի նաւորդները քննեցին
նաև Լէտի-Ֆլաւըրի ըսուած նեղուցը,
որուն անունը հիմա փոխելու են: Վասն
զի տեսան որ ծովու այս բազուկը ծոց
մ'է եղեր, որ կը տանի դէպ 'ի բարձր
լեռ մը, ուսկէ ընդարձակ սառնարան
մը կը ծագի: Նոյնպէս է Բէզերման ը-
սուած նեղուցը, որ չափէ գուրս գը-
ծուարին է եղեր քննել: Բայց այն ալ
առաջնոյն նման ծոց մ'է եղեր:

Իրենց ծովածոցի ձմերուցը թողլէն
քիչ մը առաջ, Տիպգրվլորի նաւորդ-
ները տեսան որ ձիւնն արգեւք եղեր է
իրենց գանձելու կարգ մը լաւ հանքած-
խոյ, որուն թանձրութիւնը 15 ոտքէն
պակաս չէ եղեր:

Այսպիսի գիւտ մը անդին յարգ
կ'առնուր թէ որ ձմերուան սկիզբն ը-
րած ըլլային. սակայն տարակոյս չկայ
որ շատ օգտակար պիտի ըլլայ ապա-
գայ բնեռաշու նաւարկուաց:

Ուստի այս քաջայանդուզն նաւորդ-

ները մեծ խնամքով քննեցին Սմիթի նեղուցը, քէնըտի ջրանցքը, Ռոպսընի նեղուցը, և անոնց երկու ափունքը՝ թէ՛ ամերիկեան եղերաց վրայ և թէ՛ կրէյլանտի եղերաց վրայ։ Հիմայ ծառնոթ է ծովային ճամբան որ կը միացունէ բևեռային ովկիանոսը Պաֆինի ծովուն հետ։

Մակայն Հէյսի նեղուցն, որուն բերանը գոցուած է կղզիներով, որոնք սառերը կը բռնեն չեն թողուր անցնելու, կարելի չէ եղած խորաշափել (sonder)։ գուցէ անոր մէջէն ըլլայ դէպ ի հիւսիս այն անցքն որ երկար ժամանակ է ի վեր կը փնտրուի։

Բևեռն այնպիսի անապատով մը չըրջապատած է, որ ոչ չնչուոր կեանք, և ոչ բուսական կեանք այն տեղ կրնան առաջ գալ։ Եւ որչափ ալ անհիւրընկալ ըլլան այս կողմերն, անշուշտ նոր այցելունքը դարձեալ պիտի երթան քըն նեղու այն տեղուանքը։ Վասն զի ինչպէս որ կը տեսնուի անգղիացի լրագրաց անցեալ հոկտեմբերի 31 թուով գրած յօդուածէ մը, Լոնտրացի Էրիթ (Erith) անունով պալենորսակ նաւ մը հասեր է մինչև այն տեղն, ուր ձմերբը էին Պոյսլիսի նաւաբեկեալքն յամին 1874, և դատարկ գտեր էին նամակատուփը (cain)։ Անգղիացի նուաչուք որ առաջ անկէ անցեր էին, իրենց ունեցած հրահանգացն համեմատ վերուցեր էին բոլոր թղթերն որ այն տեղ կը գտնուէին։

Էլլորդի և Տիգզլվըրիի յետադարձն ալ ոչ սակաւ գծուարութեամբ կատարուեր է։ մինչև որ Պաֆինի ծովն հասեր են շատ անգամ հարկադրուեր են սառոյցները պատուելու համար շոգւոյն բոլոր ուժովն յարձակիլ անոնց վրայ երկաթէ ցուկներով իբր թէ իւրացունէ մանգղիոնաւոր նաւեր (navires béliers) ըլլային։

Բայց այսու ամենայնիւ այն արիւս սիրտ նաւարկուներն անցեալ հոկտեմբերի մէջ փառաւոր յաղթանակաւ դարձեր են յԱնգղիա։ միայն հինգ կամ վեց հոգի կորսնցունելով իրենց

յանդուգն արշաւանաց մէջ, որոնք այնպիսի անրուժելի ցրտահարութեամբ բռնուեր են եղեր՝ որ բժշկական ամեն օգնականութիւնք անկարող եղեր են պահելու անոնց կեանքը։ Նաւաստեաց մէջ լնդապարոշքիւն (scorbut) ըսուած հիւանդութիւնն յերևան ելեր է։ որուն պատճառաց վրայ հիմայ Անգղիոյ գիտնականք մեծապէս դադեր են, վասն զի այն նաւարկութեան պաշարներն ամենայն խնամքով պատրաստուած էին։ Հետ գհետէ շատ կարևոր խնդիրներ ալ պիտի յուզուին, և բևեռային կողմանց գիտութիւնը մեծ քաջ մը պիտի առնու դէպ ի առաջ։

Արդէն Անգղիոյ ծովակալութեան պաշտոնարանն հրատարակեր է Նէյրս նաւապետին ամբողջ տեղեկագիրը, և Ստէֆէնսըն նաւապետն ալ պատրաստելու հետ է մասնաւոր տեղեկագիր մը Տիգզլվըրի նաւուն արկածիցը։ Բախիրով արշաւանք ընողներն ալ պիտի տան իրենց ստացած տեղեկութիւնները։

Թագուհին մէկէն արժանապէս վարձատրեր է այն նաւարկութեան հրամանատարներն ու անոնց տեղակալները։ Այս վարձատրելոց մէջ չեն ոչ Նէյրս նաւապետն և ոչ Ստէֆէնսըն նաւապետն, որոնց անտարակոյս մասնաւոր պարգև պիտի տրուի։

Երբ այն նաւերը Բորդամթ հասան փառաւոր ընդունելութիւն գտան, և անոնց վերադարձը սաստիկ յուզումն (enthousiasme) պատճառեց։ Ամենուն հետաքրքրութիւնը շարժեցաւ, և խուռն բազմութիւն այցելութեան գնացին այն նաւերուն։ Լոնտրայէն շոգեկառաց մասնաւոր երթեկեք հաստատուեցան այցելուաց համար։

Նէյրս նաւապետն իր տեղեկագիրն մէջ կը ծանուցանէ որ ժողով-Հէնրի ըսուած հրուանդանին բարձրէն պահակապանք (vigies) ամենապարզ օդով և տեսաբանական լաւ գործինքով չեն կրցած տեսնել և ոչ հետք մը ցամաքի դէպ ի հիւսիս մինչև 80 քիլոմէթր հեռաւորութեամբ։ Բայց հան-

դերձ այսու հետեանք չի հաներ թէ մշտընջենաւոր սառուցից ծովը տարա-
ծուի մինչ բեռուին տակն:

Այս գիտնական նաւապետը կ'անդ-
րադարձունէ թէ Հոլ խաբուած պիտի
ըլլայ տեսաբանական պատրանքէ մը,
երբ կարծեր է տեսնել Ռոպսընի նե-
ղուցին բերնոյն դէպ 'ի հիւսիսային ա-
րեւմուտք այն ցամաքը, որուն անուն
տուեր է Երկիր Նախագահին: Շատ
հաւանական բացատրութիւն մը կու-
տայ, որով կարելի է գտնել պատ-
ճառն այն խաբէութեանց. այսինքն է
սաստիկ պայծառ լուսոյն անդրադար-
ձութիւնն այն տեղունք, ուր ծոփն ա-
զատ է, քան թէ սառուցակուտից վը-
րայ: Այս նորանշան երևոյթները կրնան
հեռուի սառույցները կարծել տալ սար-
ու ժայռ: Կը վերջացունէ խօսքն ըսե-
լով, թէ շատ յաջողակ եղան այս վեր-
ջին տարիներս նաւարկութեան, Պա-
ֆինի ծովուն մէջ: Եւ ինքն կը կարծէ
որ դեռ ևս կը շարունակէ նաւարկու-
թիւնն Տիագոյի բացը. մանաւանդ թէ
կը յաւելու ըսել որ Կրէնլանտի հոգա-
բարձուն կը պատրաստուէր շրջան մը
ընելու այն կողմերն այս նոյեմբերի մէջ:
Եւ կը համարի թէ առաջիկայ եղանակն
ալ նոյնպիսի հանգամանք պիտի ունե-
նայ. վասն զի կ'ըսէ, թէ մէկ ցուրտ
տարին բաւական չըլլար այնչափ սա-
ռուցակոյտ դիզելու Պաֆինի ծովուն
մէջ որ անգնալի ըլլայ: Բայց ընդհակա-
ռակն կը մտածէ որ բոլորովին տար-
բեր ըլլայ դէպ 'ի հիւսիս Սմիթի նե-
ղուցին, այսինքն այն կողմերն որ քիչ
մը առաջ ինքը քններ էր. վասն զի
հիւսիսի քամիները մշելով զսառույց-
ները Տէվիսի նեղուցին մէջէն և զրկե-

լով զանոնք մինչև Ովկիանոս, ուր կը
լուծուին, կը դիզեն զանոնք այն ծո-
վանցքին (chenal) ջրոցը մէջ, որ կը
հաղորդէ մշտընջենաւոր սառուցից ծո-
վը և Պաֆինի ծոփն իրարու հետ:

Հոնորայի աշխարհագրական ժողո-
վոյն նախագահը, Պ. Ռաուլինսըն, կը
ծանուցանէ որ այս դեկտեմբերի 12ին
բեռնական մեծ գումարմունք մը տեղի
պիտի ունենայ ընդ նախագահութեամբ
Կալլէսի իշխանին, ուր այն բեռնաշու-
նաւարկութեան հրամանատարքն պի-
տի գան և տեղեկութիւն պիտի տան ի-
րենց ճանապարհորդութեանը վրայ, և
պիտի ընդունին իրենց հայրենակցաց
խնդակցութիւնը:

Ամերիկացի տոգդոր Հէյս որ մեծ յա-
ջողութեամբ այց ելեր էր այս ծովերուն
յամին 1865, դժբաղդաբար կարծեր էր
տեսնել այն ազատ ծոփն. այս առթիւ
երկար նամակ մը հրատարակեր է 'ի
պաշտպանութիւն իր հին եղբակացու-
թեանց այն մասին, որ միայն կարելի
էր պաշտպանել, և կը պնդէ թէ ամառ
կ'ըլլայ որ մշտընջենաւոր սառուցից
ծոփն նաւարկելի կ'ըլլայ:

Եթէ Անգղիա բաւականանայ այս
բեռնաշու նաւարկութեամբ ու ետ կե-
նայ նոր ձեռնարկութենէ, Միացեալ-
Նահանգք պատրաստ են շարունակելու
այն գիտնական արշաւանքն որ այսպի-
սի փառաւոր սկզբնաւորութիւն ունե-
ցաւ իսկ Գերմանացիք յետ անյաջող
ելից աւստրիական նաւարկութեան կը
մտածեն բոլորովին հրաժարիլ բեռ-
նախնդրութենէ, և զոհ ըլլալ միայն
դիտարաններ կանգնելով Սբիցպէրկ,
Նոր-Չեմէս և Կրէնլանտ:

